Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Զրաշեն
համայնքի ավագանու
2019 թվականի մայիսի 17-ի
N 10-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակիցների կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Լևոն Վարդանյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 17-ի թիվ 10-Ն որոշմամբ

Գ. Զրաշեն 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ……...……

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....

4. ՀՋՀՇ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ……..

5. ՀՋՀՇ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ…….

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

Ներածություն

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադրաձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ողջունում եմ Ձեզ՝ Ջրաշեն համայնքի ավագանու անդամներին, համայնքապետարանի աշխատակիցներին և համայքնի բնակիչներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագրի համալիր վերլուծության և խնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով »Տեղական ինքնակառավարման մասին« ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ջրաշեն համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

Համայնքի 2019-2023թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Ջրաշեն համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

ՀԶՀԾ-ն ներառում է նաև Ջրաշեն համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Ջրաշեն համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ջրաշեն համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Համայնքում 2019-2023 թվականներին ՀԶՀԾ-ն նախատեսում է կատարել մի շարք աշխատանքներ՝ դրանք են. մանկապարտեզի շենքի հիմնովին կառուցումը և կահավորումը, համայնքապետարանի վարչական շենքի տանիքի վերանորոգումը, կենտրոնական ճամփեզրերի մայթերի կառուցում, խմելաջրի ցանցի վերանորոգում, համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում և մշակույթի տան վերանորոգումը: Խիստ կարևորում եմ գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացման սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր վաղվա ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակույթային և հասարակական գործիչներին կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ազգի և հայրենիքի հզորացմանը:

Շնորհակալություն

Համայնքի ղեկավար՝ Լ. Վարդանյան

2 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ *ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ*

Արմավիրի մարզի Զրաշեն համայնքը գտնվում է մարզկենտրոնից 13 կմ հեռավորության վրա,փոքրիկ գյուղ է 92 տարեկան: Զրաշեն համայնքը սահմանակից է Բամբակաշատ, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Հայկավան և Արմավիր համայնքներին: Զրաշեն համայնքի վարչական տարածքում է գտնվում Արմավիր բլուրը, որը զբաղեցնում է 35 հա հողատարածություն համայնքի տարածքից: Բլուրի բարձրությունը հասնում է 80-մետրի: Բլուրի արևմտյան բարձրադիր հատվածում է տեղադրված եղել Արմավիր ամրոցը: Բլրաշարքի կենտրոնում բացվել է 6-10 սենյականոց միահարկ բնակելի առանձնատներ,ծովի մակերևույթից բարձր է մոտ 1000-1100մ:

Ժողովրդագրություն

Աղյուսակ 1. Համայնքն ունի 925 բնակիչ , այդ թվում՝

h/h	Տեղեկատվություն	մարդ
1.	Տղամարդիկ	495
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության՝ %	53
2.	Կանայք	430
	Այդ թվում կանայք կազմում են բնակչության՝ %	47
3.	Թոշակառուներ	97
4.	Փախստականներ	-
5.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	-
6.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
7.	Հաշմանդամներ	11
8.	Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	30
9.	Զոհվածների ընտանիքներ	-
10.	Աշխատունակ բնակչության թիվը	628
11.	Աշխատանք ունեցողների թիվը	52
12.	Գործազուրկներ	640
13.	Գրանցված ընտրողների թիվը	443
14.	Ընտանիքների (ծխերի) թիվը	220

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Զրաշեն համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում: Որպես համայնքի հիմնադրման տարեթիվ նշվում է 1928 թվականը: Գյուղում սկզբնական շրջանում հիմնականում բնակություն են հաստատել Կոստանդնուպոլսից գաղթած ընտանիքները, կան նաև Էրզրումից, Վանից գաղթածներ: Բնակչության մի մասի նախնիները գաղթել են Սալմաստի, Արևմտյան Հայաստանի Բասենի, Երևանի նահանգի Սուրմալուիգյուղերից, նոր ժամանակներում՝ Լիբանանից, Հունաստանից և Սիրիայից: Համայնքը նախկինում այլ անվանում չի ունեցել: Համայնքի վարչական տարածքը կազմում է 287 հա, որից գյուղնշանակության հողերը՝ շուրջ 197 հա, մշտական բնակչության թիվն ըստ 2019 թվականի՝ բնակչության սեռատարիքային փետրվարյան հաշվառման կազմում է շուրջ 925 մարդ: Բնակչության կազմում կան եզդիներ /շուրջ 120 մարդ/, ասորիներ: Ծովի մակարդակից բարձր է 1100 մետր: Համայնքում գործում է դպրոց, նախակրթարան, փոստային բաժանմունք:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Համայնքը գտնվում է հնագույն Արմավիր մայրաքաղաքի տարածքում:

Համայնքն ունի մեկ երկհարկ միջնակարգ դպրոց: Զրաշենի միջնակարգ դպրոցն ունի 35 աշխատող: Համայնքն ունի մեկ նախակրթարան: Համայնքն ունի մեկ մշակույթի տուն, որը գտնվում է անմխիթար վիճակում և չի գործում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ

Զրաշեն համայնքի վարչական տարածքը – 271 հա

Գյուղատնտեսական նշանակության հողեր – 185 հա

Բնակավայրային նշանակության հողեր – 36 հա

- Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը - 289
- Մեկ հողաբաժնի չափը մինչև 0.50 հա
- Զրաշեն համայնքի սեփականություն համարվող հողեր – 271 հա

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Զրաշեն համայնքի 2018 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 55000.0 հազար դրամ:
- Որի մեջ համայնքի սեփական եկամուտը կազմում է 32.1 %
- Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:
- Գյուղատնտեսական արտանդրանքի վաճառքը իրականացվում է տեղում և մթերող կազմակերպություններին, մեծածախ շուկաներում:

-ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի տեղական ինքնակառավարման մարմիններ են համարվում Համայնքի ղեկավարը և ավագանին:
Համայնքը ղեկավարում է համայնքի ղեկավարը համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:
Համայնքապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը .

1. Համայնքի ղեկավար
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
3. Համայնքապետարանի առաջատար մասնագետ

4. Համայնքապետարանի 2- կարգի մասնագետ
5. Հավաքարար:

Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամներից, որոնց ընտրությունը կայացել է 2019 թվականի Փետրվարի 17-ին:
Տեղական ինքնակառավարումը համայնքում հիմնված է համայնքապետարանի աշխատակազմի, ավագանու և բնակչության միջև փոխադարձ հարգանքի և վստահության վրա:

-ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խմելու ջուրը մատակարարվում է անխափան և պարբերաբար վարակազերծվում է:

- ԲՆԱԿԵԼԻ և ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 36 հա, բնակելի տների թիվը կազմում է 145 տուն:

- ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը 185 հա. է:
Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը 289 է, մեկ հողաբաժնի չափը 0,50 հա:

- ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակիչները զբաղվում են հողագործությամբ՝ հատկապես այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսության ոլորտում բնակչության զբաղվածությունը կազմում է 90 տոկոս: Հողատարածքները հիմնականում ոռոգելի են, ոռոգվում են Մերձափյա ՋՕԸ-ից , ինչպես նաև համայնքում առկա է 4 արտեզյան հոր՝ որից 2-ը գործող են: Համայնքում առկա է 493 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, մանր եղջերավոր անասուններ ոչխար 551 , խոզեր 44 , թռչուններ 1141: Համայնքում կան 7 տրակտորներ, 4 կցասայլեր, 10 բեռնատար ավտոմեքենաներ և 1 կոմբային:

- ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջրաշեն համայնքը հարուստ է բերրի հողերով: Համայնքապետարանի կողմից պարբերաբար կազմակերպվում են ծառատունկներ: Աղբահանությունը իրականացվում է 1 աղբահան մեքենայով:

- ՏՐԱՆՍՊՈՐՏ , ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային ճանապարհների ծածկույթը գրունտային է :
Հանրապետական նշանակության ճանապարհը ասֆալտապատ է և վերանորոգված, որի երկարությունը՝ 1 կմ:
Համայնքով է անցնում մարզկենտրոն և մայրաքաղաք մեկնող ուղևորատար տրանսպորտային երթուղին:

-ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում առկա են մանրածախ առևտրի 2 խանութներ, 1 ավտոլվացման կետ և 1 հանրային սննդի (լավաշի) վաճառակետ:

- ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է հանրակրթական մեկ դպրոց: Դպրոցի շենքը վերանորոգման կարիք ունի: Դպրոցում սովորում են 113 աշակերտ, աշխատում 35 անձ:
Դպրոցը մշտապես գտնվում է համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

- ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքն ունի մշակույթի տուն, որը գտնվում է անմխիթար վիճակում, ունի
վերանորոգման կարիք, որը կնպաստի միջոցառումների անցկացման և մշակութային կյանքի աշխուժացմանը: Երիտասարդների դաստիարակության և զարգացման համար խիստ կարևոր է նաև գրադարանում առկա գրքային բազայի թարմացումը, որի մեծ մասը խորհրդային ժամանակվանից մնացած գրքեր են:

- ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա: Բուժամբուլատորիան գտնվում է համայնքապետարանի շենքում, նորոգվել և կահավորվել է 2009 թվականին ՆՕՎԱ Ամերիկյան կազմակերպության և գյուղապետարանի միջոցներով: Բուժամբուլատորիայում աշխատում է 1 աշխատակից: Համայնքում կա մեկ ֆուտբոլային մարզադաշտ, որը գտնվում է գյուղապետարանի մոտ, որտեղ կազմակերպվում է տարբեր բնույթի սպորտային միջոցառումներ:

- ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ծառայությունից օգտվում են սոցիալապես անապահով պայմաններում ապրող 30 ընտանիքներ: Կան հաշմանդամներ, սեփականաշնորհված հողեր չունեցող ընտանիքներ:

Աղյուսակ 2. Սոցիալական օգնություն

No	Սոցիալական օգնություն	Աջակցություն ստացող անձանց քանակ
1	Նպաստ ստացողներ	30
2	Հաշմանդամի թոշակ ստացողներ	11
3	Թոշակառուներ	86

-ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը կարգավորվում է ավագանու կողմից հաստատված կարգով : Համայնքում ակտիվ է ավագանիների դերն ու նշանակությունը: Ավագանու բոլոր նիստերը դռնբաց են և համայնքի յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունի մասնակցելու դրան: Բնակիչներին հուզող ցանկացած հարց քննարկվում է ավագանու նիստերի ժամանակ, որոնց ներկա են գտնվում նաև բնակիչները:

-ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հիմնական աղետները առաջանում են անբարենպաստ եղանակի պատճառով (ցրտահարություն, կարկտահարություն):

- ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքում հիմնականում զբաղվում են գյուղմթերքների արտադրությամբ , չրարտադրությամբ ինչպես նաև սառնարանային տնտեսությամբ և անասնապահությանբ

2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

-ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

-Համայնքը մոտ է մարզկենտրոնին և գտնվում է հանրապետական նշանակության ճանապարհին հարակից:
-Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարումը:
-Առկա է հեռախոսակապ և ինտերնետ
-Ֆիքսված և բջջային հեռախոսակապը , փոստը և ինտերնետ կապը ապահովվում է ներքոնշյալ կազմակերպությունների կողմից.
1.Beeline AM (բջջային և ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ)
2.Vivacell-MTS (բջջային հեռախոսակապ և ինտերնետ)
3.ARPINET(ինտերնետ)
4.Հայփոստ (փոստային ծառայություն)
-Համայնքի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները:
-Համայնքի վարչական տարածքում անհատ ձեռներեցների, խանութների արդյունավետ աշխատանքը:
- Բարձրաժեք և արդյունավետ գյուղատնտեսության առկայությունը:

-ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

-Գործազրկության մակարդակը:
-Սոցիալապես անապահով բնակչության բարձր տոկոսը:
-Խմելու ջրի ոռոգման համակարգի վերանորոգման անհրաժեշտությունը:
-Վերամշակող ձեռնարկությունների բացակայությունը:
-Հողերի բերրիության նվազում:
-Ճանապարհների անմխիթար վիճակը:
-Մշակույթի տան հիմնանորոգումը:
- Առկա գործազրկությունը
- Ներդրումային ծրագրերի և արտասահմանյան ներդրումների բացակայությունը
-Համայնքի հողի հարկի գանձումների դժվարությունները:
-Համայնքի բնակիչների անվճարունակությունը:
-Իրականացվող երիտասարդական ծրագրերի պակասը:

-ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնակչությունը գյուղատնտեսության ոլորտում հիմնականում զբաղվում է ՝ այգեգործությամբ, անասնապահությամբ և բանջար բոստանային կուլտուրաների մշակությամբ :
Նոր աշխատատեղերի ստեղծումը հնարավորություն կտա բարձրացնել բնակիչների սոցիալ - տնտեսական վիճակը:
Հեռանկարային ծրագրեր, որոնք կբերեն ֆինանսական կայունության:
Համայնքում կան 7 ԲՈՒՀ-ի ուսանողներ :

-ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին հիմնական սպառնացող վտանգներն են վաղ գարնանային ցրտահարությունները , կարկտահարությունները, գործազրկությունը և անվճարունակությունը:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2019թ.՝ 68.0%, 2020թ.՝ 68%, 2021թ.68.2%, 2022թ.՝68.5 %, 2023թ.՝69.6

%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 3. Համայնքի 2017-2018թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2019-2023թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.
		փաստ.	Փաստ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ							
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ							
1.1	Հողի հարկ							
1.2	Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար							
1.3	Տեղական տուրքեր							
1.4	Այլ եկամուտներ							
2	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ/2.1+2.2/							
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ							

Աղյուսակ 4. Համայնքի 2019-2023թթ. բյուջեն

(եկամտների կանխատեսումը 2018 թվականի համեմատ աճը արտահայտված տոկոսներով)

Եկամտի և ծախսի տեսակը	2018թ. տարեկան պլան	2019թ. կանխ.	2018թ փաստ.նկ ատ %	2020թ. կանխ.	2018թ փաստ.նկ ատ %	2021թ. կանխ.	2018թ փաստ.նկ ատ %	2022թ. կանխ.	2018թ փաստ.նկ ատ %	2023թ. կանխ.	2018թ փաստ.նկ
Ընդամենը եկամուտնե ր	**52500.0**	5500.0	10.6%	57957.2	11.2%	58560.0	11.3%	66072.0	12.7%	68075.0	13.1 %
Հարկային եկամուտնե ր որից	11340.0	17673.8	55.8%	17500.0	55%	20730.0	82.8%	20832	83,7%	24730.0	118%
Հողի հարկ	8000.0	9000.0		9000.0		10500.0		10500.0		12500	
Գույքահար կ /շենք և ավտո/	3110.4	4000.0		4300.0		4900.0		5000.0		5500.0	
Տեղական տուրքեր	230.0	230.0		230.0		230.0		230.0		230.0	
Այլ եկամուտնե ր	4000.0	4443.8		4000.0		5100.0		5102.0		6500.0	

Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	37159.2	37326.2		39328.2		39330.0		45240.0		47345.0	

3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ջրաշեն համայքնի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում համայնքին տալու է՝ հեռանկարային զարգացման հնարավորություններ:

Համայնքի զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ բարեփոխումների ճանապարհով բարելավել համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակը: Մանկապարտեզի կառուցմամբ կլուծվի երեխաների զբաղվածության հարցը, ինչպես նաև կստեղծվեն նոր աշխատատեղեր: Այս ծրագրով նախատեսվում է ճանապարհների նորոգումը, փոսալցումը և փողոցների բարեկարգումը :

Ջրաշեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է բնակիչների իրական եկամուտների 10 % աճ:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին կկազմի 10 %:

Համայնքի սեփական եկամուտների աճը կկազմի 5%:

Համայնքում գրանցված բնակիչների փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով / կկազմի 0.5 %:

-ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա տարիների համայնքի հիմնական նպատակներն են՝

- Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ
- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.
- ապահովել համայնքի նախադպրոցական, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների շենքերի հիմնական վերանորոգման, ջեռուցման, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռք բերման աշխատանքներ
- համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր և միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները
- բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները
- համայնքի ճանապարհների նորոգում:

-ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա տարիների համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ **Մանկապարտեզի շենքի հիմնովին կառուցապատում և կահավորում**
- ✓ **Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում, փոսալցում**

- ✓ **Համայնքապետարանի վարչական շենքի (համայնքապետարան, մշակույթի տուն, գրադարան) տանիքի վերանորոգում**

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1

Համայնքի փողոցների նորոգում, փոսալցում, կենտրոնական ճանապարհի մայթերի կառուցում

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և փոսալցում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ ՈՒնենալ նորգված բարեկարգված փողոցներ և ճանապարհներ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2020	2021	2022	2023	2024
			2000000	2000000	2000000	2000000	2000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Փողոցների և ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում և նորոգում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2020	2021	2022	2023	2024
			2000000	2000000	2000000	2000000	2000000
Ծրագրի հիմնական գործողությունները	Միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Իրականացնել աշխատանքները Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2000000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 8000000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 10000000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2020-2024թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՒ

Համայնքապետարանի վարչական շենքի (համայնքապետարան, մշակույթի տուն, գրադարան) տանիքի վերանորոգում, ներքին հարդարում

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Համայնքապետարանի վարչական շենքի տանիքի վերանորոգում**						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Համայնքապետարանի վարչական շենքի տանիքի վերանորոգում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2020	2021	2022	2023	2024
			1000000	1000000	1000000	1000000	1000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում 2. Համայնքապետարանի վարչական շենքի տանիքի վերանորոգում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2020	2021	2022	2023	2024
			400000	400000	400000	400000	400000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2020	2021	2022	2023	2024
			600000	600000	600000	600000	600000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2000000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 3000000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5000000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2020-2024թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքապետարանի տանիքի վերանորոգում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՅ

Ֆուտբոլի դաշտի բարեկարգում, մարզահրապարակի կառուցում (Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Ֆուտբոլի դաշտի բարեկարգում, մարզահրապարակի կառուցում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝
Ֆուտբոլի դաշտի բարեկարգում, մարզահրապարակի, կառուցում</td><td colspan="6"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2019</td><td>2020</td><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td></tr>
<tr><td></td><td>400000</td><td>400000</td><td>400000</td><td>400000</td><td>400000</td></tr>
<tr><td rowspan="7">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2019</td><td>2020</td><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td></tr>
<tr><td></td><td>250000</td><td>250000</td><td>250000</td><td>250000</td><td>250000</td></tr>
<tr><td colspan="6">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2019</td><td>2020</td><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td></tr>
<tr><td></td><td>150000</td><td>150000</td><td>150000</td><td>150000</td><td>150000</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">Միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1. դաշտի հարթեցում, ցանկապատում, մարզագույքի ձեռքբերում
2. դաշտի կանաչապատում, ոռոգման խողովակների ձեռքբերում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝ 500000
Կապիտալ ծախսեր՝ 1500000
Ընդհանուր բյուջեն՝ 2000000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">երեխաները, համայնքի բնակչությունը</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">2020-2024թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Համայնքում զարգացնել սպորտը, կազմակերպել սպորտային միջոցառումներ, ստեղծել առողջ ապրելակերպի նաղադրյալներ</td></tr>
</table>

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի զալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Զրաշեն համայնքի ՀԶՀԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է կից ֆայլում:

Աղյուսակ 5. ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(Զրաշեն համայնք)
(2019-2023 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջե տա-վորվա ծ միջոցն եր	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ					Ծախսերի դասեր			Ֆինանսավորման կարգավիճակ			
		2019	2020	2021	2022	2023	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն /նվիրատվություն	Պետություն-համայնք-վանանավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Վերկայացվել է	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
Մանկապարտեզի շենքի հիմնովին կառուցապատում և կահավորում			5700.0				V			V								
Համայնքապետարանի վարչական շենքի կտուրի վերանորոգում		4000.0	4000.0				V					V						
Խմելաջրի ցանցի կառուցում			2500,0	2000,0	2000,0		V					V						
Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում		1000,0	1000,0	1000,0	1000,0	1000,0	V					V						

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Կից ֆայլ*ում* ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 6. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Զ Ն Ա Գ Ի Ր

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ
(2019-2023 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Ցուցանիշի թիրախային արժեք (2022)	Ցուցանիշի փաստացի արժեք (2022)	Ցուցանիշի կատարողական (2022)	Ցուցանիշի թիրախային արժեք (2023)	Ցուցանիշի փաստացի արժեք (2023)	Ցուցանիշի կատարողական (2023)	Տվյալների հավաքագրման պարբերականությունը		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																	Կիսամյակա յին	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	12%	12%			10%			9%			8 %			7%				X	Մարզպետարան, համայնքապետարան)	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	12%	55.8 %			55%			82.8%			83.7%			118%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	1%	0.8 %			0.8%			0.8 %			0.8 %			0.8%				X	ՀՀ Ոստիկանություն	Հարցում
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																				
1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ																				
1.1.Համայնքի մշակույթի տան կահավորում և ջեռուցման համակարգի անցկացում	**400.0**	600.0			700.0			800.0			1000.0			2000.0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
1.2.Մանկապարտեզի շենքի կառուցում	**3220.0**	10000.0			11000.0			12000.0			13000.0			16000.0				X		
1.3.Նորագույն տեխնոլոգիաների ուսուցման կենտրոն	**100.0**	500.0			600.0			700.0			800.0			2600.0				X		
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը																				
2.2. Համայնքի փողոցների և ճանապարհների մասնակի նորոգում	0	1100.0			1150.0			1200.0			1250.0			1300.0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
2.2.Համայնքի զբոսայգու կառուցում	0	500.0			500.0			500.0			500.0			5000.0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

2.3.Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում	0	2050.0			2570.0			3080.0			3080.0			3080.0				X		
4.Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը																				
4.7. Համայնքի մարզադպրոցի կառուցում	0	500.0			500.0			500.0			500.0			500.0				X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
5.Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով																				

6.Եզրափակում

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Ջրաշեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2019-2023թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել՝ որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Համայնքապետարանի բաժինները և ծառայությունները կմշակեն իրենց բնագավառի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, մարզպետարան: Լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2019-2023թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքի յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: